

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ՌՈՒՐԵՆ ԼԵՎՈՆԻ

Հին ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱՐԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ. ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ
/ Մ.Թ.Ա. 1-ին Դ. - Մ.Թ.4-րդ Դ. /

Ը.00.01 - Հայոց պատմության մասնագիտությամբ
պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Академику
Гарнуху Хореновичу
Сергееву с глубоким
уважением от автора
ԵՐԵՎԱՆ - 1998 Ք. Ասատրյան

15 VI 98

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում

Պաշտոնական ընդդիմախոսներ

1. Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Բ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
2. Պատմական գիտությունների դոկտոր
Ե. Լ. ՊԱՆԻՍԵՆՅԱՆ
3. Պատմական գիտությունների դոկտոր
Վ. Մ. ՎԱՐՊԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն

Խ. Աբովյանի անվան Հայկական Պետական մանկավարժական ինստիտուտի Հայոց պատմության ամբիոն


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 1998 թ. հունիսի 6-ին

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան շնորհող 004 մասնագիտական խորհրդի նիստում/հասցեն-375019, Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24Գ/

Ատենախոսության հետ կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական կարիքներում:

Սեղմագիրն առաքված է ,,5,, հունիսի 1998թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳՈՒՄԸ,
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ


Ա. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հիմնադրված ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴԻԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Հայաստանի հա-
րաբերությունները Հոգմի և իրանի հետ ունեցել են զաղափարաբա-
նական և իրավական ասպեկտներ, հարցեր էին հարուցում կապված
երկրի պետական/արքայական/ինքնիշխանության տեսական հիմնավորման
հետ: Ներկա ուսումնասիրության մեջ քննվում են այդ միջազգա-
յին իրադարձություններում հայկական հասարակության քաղաքական և զա-
ղափարաբանական պրոբլեմները, որոնք դեռ չեն եղել մասնագիտական հե-
տազոտման առարկա: Նրանց կոնտեքստում լուսաբանվում են Հայաստա-
նում քրիստոնեության ընդունման կոնկրետ պատճառները, ցույց է
տրվում այդ իրադարձության քաղաքական նշանակությունը:

Թագավորական իշխանության բուն պրակտիկան, իրականացման մե-
թոդները, կառավարչական Ֆունկցիաները իրազորվում էին սերտ միակ-
ցության մեջ արքայի հեղինակությունը հիմնավորող, սրբազործող
զաղափարաբանության հետ, հենվում էին նրա վրա, մատուցելով քաղա-
քական պրակտիկայի և քաղաքական ավանդական պատկերացումների
փոխադրեցության օրինակ: Նրանց միակցությունը կազմում է հասա-
րակության /սոցիումի/ քաղաքական զաղափարաբանական համակարգը:
Փոխկապակցված հարցերի կոմպլեքս լինելով, այն կարող է ուսում-
նասիրվել իր կոնկրետ պատմական կոնտեքստում, այսինքն, ոչ ստատիկ
կերպով, իր արտաքին քաղաքական միջավայրից ոչ վերացարկված:

Հատուկ հետազոտման է արժանի զաղափարաբանական գործոնի
վճռորոշ նշանակությունը պետության և, մասնավորապես, արքայական
իշխանության ավանդական Ֆունկցիաների կանոնակարգի իրազորման
համար: Հին արևելյան հասարակության պետական/արքայական/զաղափարա-
բանությունը, սերտ կապի մեջ գտնվելով կրոնի հետ, ներկայաց-
նում էր թագավորի անձի, արքայական իշխանության ծագման և հասարա-
կական Ֆունկցիաների, հաստեղի հետ արքայի հարաբերությունների մա-
սին նորմատիվ բնույթ ունեցող¹ քաղաքական պատկերացումների
ինքնուրույն ընագավառ: Գաղափարաբանական պատկերացումներին են
հարում նաև արտաքին քաղաքական, ստրատեգիական դոկտրինաները,
որոնց խոր մշակվածության մասին է վկայում Տիգրան Մեծի և Ար-
տավազդ 2-րդի միջազգային/քաղաքական դիվանագիտական/ փորձը:

1 Ժամանակակից հետազոտությունների գնահատականով զաղափարաբանու-
թյունը կատարում է մարդու և հասարակության կյանքն ուղղող
կազմակերպական, կանոնակարգող և վերահսկիչ սիստեմի դերը:
Տես՝ Политология. Энциклопедический словарь, Москва, 1993
(Ред. кол. Ю. И. Аверьянов, А. П. Афанасьев, В. С. Глаголев и
др.), с. II 4.

Հին արևելյան ավանդական և միջնադարյան եվրոպական հասարակություններում թագավորական իշխանության և պետական զաղափարաբանության անքակտելի կապն ու փոխազդեցությունը քանիցս հատուկ ուսումնասիրությունների առարկա են եղել: Այդ ուսումնասիրությունները հաստատում են տարբեր զարգացման աստիճանի վրա գտնվող հասարակությունների համար այն ընդհանուր մշարությունները, որ իշխողի/զահակալի/հեղինակության իշխանության իրականացման այդ կարևորագույն գալմանի հիմքում, ընկած է գերբնական աշխարհի հետ նրա կապի մասին պատկերացումների համակարգը: ¹ Այդ նորմատիվ բնույթի պատկերացումներին չհամապատասխանելը կարող էր հանգեցնել թագավորողի անձի ապստրեպագործմանն ու հեղինակազրկմանը:

Հայաստանում պետական-զաղափարաբանական համակարգի զարգացումը ընթանում էր մեծ տերությունների հզոր և իր բնույթով բացասական ազդեցության ներքո: Դրանում էր կայանում թագավորի կողմից իշխանության իրագործման առանձնահատկությունը: Մենք նկատի ունենք Հայաստանի չհռմբեական կայսրության հետ 300-ամյա հարաբերությունների զաղափարաբանական և իրավական ապեկոսները, որոնց նշանակությունը վճռորոշ էր Հայաստանի ներքաղաքական կացության և միջազգային կարգավիճակի համար:

Մեծ տերությունները, հատկապես չհռմբեական կայսրությունը Հայաստանի նկատմամբ իրենց ծավալապաշտ քաղաքականության նշանակետն են ընտրել թագավորական իշխանության բուն ինստիտուտը/հաստատությունը/, հետամուտ լինելով նրա թուլացմանն ու հեղինակազրկմանը, նրա գոյության զաղափարաբանական ավանդական հիմքերի քայքայմանը:

1-3-րդ դդ. մ.թ.ա. 20-ից մինչև մ.թ. 298 մեծ տերությունների քաղաքականության հետևանքով Հայաստանում թագավորական իշխանության կրոնազաղափարաբանական հիմքերի առաջացած մզնաժամային

1 G. Balandier, *Anthropologie politique*, Paris, 1993 (2e éd.), p. 117-144. И.П.Вайноверг, *Человек в культуре Ближнего Востока*, Москва, 1986, с. 115-141. P. Briant, *Conquête territoriale et stratégie idéologique: Alexandre le Grand et l'idéologie monarchique achéménide*. - *Rois, tribus et peuples*, Paris, 1982, p. 357-403. Id. *Forces productives, dépendance rurale et idéologie religieuses dans l'Empire achéménide*. - *Op. cit.*, p. 431-474. *La Royauté sacrée dans le monde chrétien*. (Colloque de Royaumont, mars 1989) EHESS, Paris, 1992.

վիժակը, պետական ինքնիշխանության/սովերենության/ սահմանափակ բնույթը Հայաստանի քաղաքական զարգացման կարևոր առանձնահատկություններն են, որոնց պարզաբանումն ու քննությունը անհրաժեշտ է ոչ միայն սովյալ 300-ամյա ժամանակաշրջանում ընդհանուր իրավիժակի պատկերացման համար: Ստեղծված իրավիժակում ներփակ են Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու կոնկրետ պատժաները: Նշված մոտեցման շնորհիվ քրիստոնեության ընդունումը Հայաստանում կրոնազաղափարաբանական բնագավառում պետական իշխանության այդ կարևորագույն ակտը, ի հայտ է գալիս որպես նախորդ ժամանակաշրջանի քաղաքական և զաղափարաբանական պրոբլեմներով պայմանավորված իրադարձություն, այսինքն իր հաստատուն տեղ է գտնում պատժա-հետևանքային կապերի մեջ/այլ կերպ ասած, ձեռք է բերում իր պատմականությունը/: Հետևաբար, նաև մ.թ.ա. 1-ին դարի վերջի-մ.թ. 298 թ. ժամանակաշրջանի իրադարձություններում հիմնավոր է տեսնել որոշակի պրոցես, որի տրամաբանական ավարտը հանդիսացավ դարձը, նշանավորելով 300-ամյա կրոնազաղափարաբանական մզնաժամի հաղթահարումը և թագավորական/պետական/ինքնիշխանության իր ամբողջ ծավալով վերականգնումը:

ԹԵՄԱՑԻ ՌԻՍՈՒՄԱՍԻՐՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ. 1-4-րդ դդ. հռոմեա-իրանական ընդհանրային պայմաններում Հայաստանի քաղաքական-զաղափարաբանական համակարգի զարգացումը, արքայական սովերենության վերահաստատման հետ կապված իր առանցքային պրոբլեմով, դեռևս չի առանձնացվել որպես հետազոտման թեմա:

Հին Հայաստանի պետական, վարչական կառուցվածքը, ֆինանսները, բանակը, պետական հաստատությունների կառավարչական ֆունկցիաները հետազոտվել են Գ.Խ. Արզալյանի, Մ.Մ. Նրկյաշարյանի կողմից: ¹ Գ.Խ. Արզալյանը դիտարկել է արքայի և արքայատոհմի պաշտամունքը հելլենիստական ժամանակաշրջանի Հայաստանում: ²

Նշված հարցերի համեմատությամբ ինքնուրույն բնագավառն են կազմում իշխանության հարաբերությունները/միջանհատական մակարդակում փոխազդեցություններ/իշխող հիերարխիայի կազմակերպական

1 Գ.Խ. Արզալյան, Հայաստանի պետական կարգը հելլենիստական դարաշրջանում- Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 667-688: Շ.Մ. Կրկյարյան. Государственное устройство древней Армении. (Автореферат докт. дис.). Ереван, 1976.

2 Դ.Մ. Սարգսյան, Обожествление и культ царей и царских предков в древней Армении. - ВДИ, 1966, № 2.

սկզբունքները, ավագանու միջալայրում անհատի կախվածություն աս-
տիճանը լիազավորից, և, հետևաբար, արքայի իշխանության ծավալը,
դրանք սրբագործող և կարգավորող զաղափարաբանությունը:

Պարզաբանման դեռ կարիք ունեն մ.թ.ա. 1-ին դարում Հայաս-
տանի արտաքին քաղաքականության և դիվանագիտության առանձին
հարցեր:

1-4-րդ դդ./մ.թ.ա. 20-մ.թ. 324 թթ./ հայ-հռոմեական և
հայ-իրանական հարաբերությունների պատմության հարցերը իրենց հե-
տազոտությունների առարկա դարձրած պատմաբանները՝ Հ.Աստուրյանը
/1912/, Հ.Մանանդյանը/1944/, Ռ.Գրուսեն/1947/, Մ.Լ.Շումոնը/1976/,
Ա.Երեմյանը/1971, 1984/ քննում էին ռազմադիվանագիտական պատմու-
թյան բնագավառը/¹ պատերազմական գործողություններ, հռոմեական գոր-
քերի Հայաստանում ռազմադիվանագիտական աշխարհագրության, ժամա-
նակագրության հարցեր/։ Նրանց տեսադաշտից դուրս են մնացել Հայաստանի
նկատմամբ Հռոմեական կայսրության և իրանի վերած քաղաքականության
զաղափարաբանական և իրավական ասպեկտները և դրա հետևանքով Հայաս-
տանի առաջ ծառացած պրոբլեմները։ Այդ իսկ պատճառով չբացահայտվեց
հայոց արքայի սրբազան հեղինակության, նաև իշխանության/այլ կերպ ա-
սած պետության սուվերենության/կրոնազաղափարաբանական հիմքերի բա-
ցասման փաստը Հռոմի կողմից և, հետևաբար, դրանց վերականգնման հիմ-
նահարցի առկայությունը Հայաստանում։ Այդ հիմնահարցը, ինչպես դա
ցույց է տրված ներկա առեմախոսության մեջ, առանցքային էր
մ.թ.ա 1-ին դարի վերջի - մ.թ. 4-րդ դարի սկզբի հայկա-
կան հասարակության համար։ Այդ քաղաքական խնդրի նկատի առնելը

1 Հ.Աստուրյան, Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստա-
նի և Հռոմեական, Վենետիկ, 1912: Հ.Մանանդյան, Քննական տեսու-
թյուն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ.Ա., Երևան, 1977,
էջ 280-319: Հ.Մանանդյան, նշվ. աշխ., հ.Բ., Երևան, 1978, էջ
9-140: R. Grousset, Histoire de l'Arménie des origines à
1071, Paris, 1973, p. 103-126. M.L. Chaumont, L'Arménie entre
Rome et l'Iran. De l'avènement d'Auguste à l'avènement de
Diocletien. - Aufstieg und Niedergang der Römischen Welt. II
Neunter Band, Walter de Gruyter, Berlin-New York, 1976, p.
71-194. / Ս.Տ.Երեմյան, Հայաստանը հռոմեա-պարթևական հակամար-
մություն ունեցող Հայ ժողովրդի պատմություն, հ.1, ԳԱ, հրատ.,
1971, էջ 703-794: Ս.Տ.Երեմյան, Հայաստանը ֆեոդալական հարա-
բերությունների ձևավորման ժամանակաշրջանում/3-4-րդ դդ./-
Հայ ժողովրդի պատմություն, հ.2, ԳԱ հրատ., Երևան, 1984, էջ
21-110:

թույլ է տալիս էական շտկումներ մտցնել կարևոր քաղաքական
իրադարձությունների գնահատականում/Ջենոնի զահակում, 66 թ.-ին
Հոանդեայի պայմանագիր/տեսնել մի շարք իրադարձությունների մեջ
զաղափարաբանական գործոնի առաջատար դերը: 1-3-րդ դդ. Հայոց
թագավորության գոյության կրոնազաղափարաբանական հիմքերի մզնաժա-
մի չպարզաբանված մնալը թույլ չտվեց հիշատակված ուսումնասիրող-
ներին բացատրել Տրդատի կողմից քրիստոնեության ընդունումը որ-
պես տվյալ քաղաքական պրոբլեմի վճռական լուծում:

Քրիստոնեության ընդունման ակտը դիտարկվում էր իր պատ-
մաներից դուրս, այսինքն, առանց նկատի առնելու թագավորական իշ-
խանության զաղափարաբանական մզնաժամը հաղթահարելու պետական խըն-
դիրը: Թվարկված աշխատություններին բնորոշ էր քրիստոնեության
ընդունման հարցի բավականին հակիրճ շարադրանքը: Առկա էր նկա-
րագրական, այլ ոչ թե պրոբլեմային մոտեցումը: Որպես կանոն, եղած
զրականության մեջ ծանրակետը դրվում էր Հայաստանում եկեղեցու
կազմավորման, նախարարական դասի հետ նրա մերժեցման՝ ժամանակագրա-
կան և թեմատիկ առումով մեր հետազոտության շրջանակներից դուրս
հարցերի վրա: Այսպիսով, ակնհայտ է ներկայացված առեմախոսության
բովանդակությունը կազմող հանգուցային հարցերի չհետազոտված
բնույթը:

ՌԻՍՏԻՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ. Պաշտպանության
ներկայացված գիտական աշխատանքի խնդիրն է լուսաբանել 1-4-րդ
դդ., Արտաշեսյանների և Արշակունիների օրոք Հայոց թագավորու-
թյան քաղաքականությունը ոչ բարենպաստ միջազգային իրադրու-
թյան մեջ՝ ծավալապես տեղությունների շրջապատում և դրա հետևանքով
իր առջև ծառացած այն քաղաքական՝ զաղափարաբանական և իրավական
հիմնահարցերը, որոնք պայմանավորեցին քրիստոնեության որպես պետա-
կան կրոնի ընդունումը Տրդատ 3-րդի կողմից: Այլ կերպ ասած,
մեր նպատակն է լուսաբանել Հին Հայաստանի թագավորական իշխանու-
թյան գոյատևման զանազան ասպեկտները/արտաքին քաղաքական, դիվանա-
գիտական, կրոնազաղափարաբանական, միջազգային-իրավական/:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ. Հետազոտվող հարցերի նյութերը ներկայացված
են անտիկ՝ հունա-հռոմեական և հին հայկական հեղինակների աշխա-

1 Հայոց թագավորության այդ խոշորագույն ներքաղաքական ակտը
Հ.Մանանդյանը ներկայացնում է իր աշխատության ընդամենը 127-
134 էջերում/Տես Քննական տեսություն..., հ.Բ./: Ս.Տ.Երեմյան,
Հայաստանը ֆեոդալական հարաբերությունների ձևավորման ժամա-
նակաշրջանում/3-4-րդ դդ./, էջ 71-80:

տություններում: Տիգրան Մեծի Պարթևստանի նկատմամբ վարած քաղաքականության ընդհանուր ստրատեգիական մտահղացման, կոնկրետ տակտիկական սկզբունքների պարզաբանման համար արժեքավոր հաղորդումներ է պահպանել Պլուտարքոսը: Արտավազդի օրոք արտաքին քաղաքականության սկզբունքների զարգացումը հնարավոր է հստակ լուսաբանել Ստրաբոնի, Դիոն Կասիոսի, Պլուտարքոսի տվյալների շնորհիվ:

Հռոմեական կայսրերի քաղաքականության, մասնավորապես, Հայոց թագավորների նրանց ձեռքով թագադրելու մասին տվյալները, այդ փաստերին հոմեական կողմի տված պաշտոնական մեկնաբանությունները պահպանվել են հռոմեացի հեղինակների՝ Վելլևուս Պատեռուկոսի, Լուկիոս Փլորոսի, Տակիտոսի, Ավետտինոսի, Ամմիանոս Մարկելինոսի երկերում: Կարևոր քաղաքական տեսական հավելումներ են զետեղվում Տիտոս Լիվիոսի պատմական աշխատության մեջ: Գրված լատիներեն, նրանք բովանդակում են կայսերական արտաքին քաղաքականության հոմեական իրավունքի տեսանկյունից կարևոր ձևակերպումներ: Հռոմեացի լատին հեղինակներին են հարում կայսերական շրջանի հունալեզու հեղինակները՝ Հերոդիանոսի և պրոբեն հիշատակված Դիոն Կասիոսի տեղեկությունները: Խիստ կարևոր է մեզ հասած պաշտոնական վավերագիրը՝, Աստվածային Օգոստոսի մեծագործությունների, հուշակոթողը:

Բացառիկ արժեքավոր տեղեկություններ են բովանդակում հռոմեական պաշտոնական արվեստի նմուշները՝ Հայոց թագավորների թագադրման առթիվ Հռոմում թողարկված դրամները, գլխարկայի գլուխգործոց՝ այսպես կոչված, «Փրանսիական կամեան», նրանց վրա տեսարանների պատկերների վերլուծությունը հետազոտողին ընձեռում է հայոց արքայի և հռոմեական կայսեր փոխհարաբերությունների գաղափարաբանական կողմի վերաբերյալ անփոխարինելի ինֆորմացիա/մեզ հետաքրքրող հարցերի շրջանակում դրանց վերլուծությունը արվում է առաջին անգամ/:

3-4-րդ դդ. Հայաստանում ստեղծված կրոնագաղափարաբանական իրադրության, ներքին քաղաքական իրավիճակի պարզաբանման համար աղբյուր են հանդիսանում հռոմեական հեղինակները՝ Պաղեստինի Կեսարիայի հունագիր եպիսկոպոս Եվսեբիոսը, լատինալեզու Լակտանցիոսը: Տվյալ ժամանակաշրջանի համար մեծ կարևորություն ունեն հայ դասական հեղինակների՝ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու աշխատությունների համապատասխան վկայությունները:

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ. Հետազոտության մեթոդաբանական հիմքն են հանդիսանում ժամանակակից պատմագիտության մեջ հին և միջնադարյան Արևելքի հասարակությունների տնտեսական և քաղաքական զարգացման օրինաչափությունների մասին մանաշում գտած հիմնադրույթները: Դրանք խորսխված են ինչպես ընդհանուր տեսական, այնպես և կոնկրետ երկրագիտական, պատմական հետազոտությունների վրա: Ի տարբերություն հունա-հռոմեական, արևմտաեվրոպական հասարակության/Արևելքի հասարակությունների հատկանշական առանձնահատկություններից մատնացույց են արվում պետության վճարող տնտեսական կազմակերպչական Ֆունկցիան, հասարակության նկատմամբ պետական ապարատի ինքնաբավ բնույթը և նրա հետ իշխող դասակարգի/ռազմածուռայական ավազանու/միաժողովուրդ, արտադրության միջոցների մասնավոր սեփականատերերի դասակարգի թերզարգացումը և անմիջական արտադրողին՝ համայնական գյուղացիությանը պետության հակադրվելու փաստը: ¹

Արտաշեսյանների օրոք թագավորական իշխանության Ֆունկցիաների, ինչպես նաև իշխող դասակարգի կազմակերպական ձևերի քննությունը վկայում է Արևելքի՝ հասարակությունների հետ մ.թ.ա. 3-1-րդ դդ. Հայաստանի հասարակական զարգացման տիպաբանական նմանության մասին:

1 ժամանակակից հետազոտություններում հաստատվում է և զարգացվում Ե.Սարգսի այն դրույթը, որ Արևելքում անմիջական արտադրողին հակադրվում էր ոչ թե հողի մասնավոր սեփականատերը, այլ պետությունը/Sbu K.Маркс, Ф.Энгельс.Соч. 2-е изд.Т.25, 42, с.354: Նշենք այդ հետազոտություններից կարևորները. Л.С.Васильев. Рабовладение и феодализм в древнем Китае /о социально-экономическом строе докапиталистических обществ/. - Общее и особенное в историческом развитии стран Востока. Москва, 1966. И.А.Стучевский. О первичных классовых формированиях и азиатском способе производства. Եվ.աշխ.: Т.А.Меликишвили. Некоторые аспекты вопроса о социально-экономическом строе древних Ближневосточных обществ. - ВДИ. 1975. № 2. Е.С.Богословский. Государственное регулирование социальной структуры в Древнем Египте. - ВДИ. 1981. № I. Л.С.Васильев. Феномен власти-собственности - Типы отношений на Востоке в средние века. Москва. 1982. Արևելքի հասարակությունների զարգացման օրինաչափությունների տեսական ընդհանրացումները ներկայացված են Լ.Ս.Կասիլևի հիմնադիր աշխատության մեջ՝ Л.С.Васильев. История Востока. Т.I. Москва 1993, с.13-82. Արևմտաեվրոպական ուսումնասիրողներից նշենք՝ P. Briant Եվ.աշխ.: Պարսիան աշխատության մեջ բացահայտվում են Արեմենյան տերության հիմնական քաղաքական և գաղափարաբանական կոմանները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. Ուսումնասիրության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ այն թույլ է տալիս ավելի խորը մանաշել Հայկական պետության փորձը՝ արտաքին և ներքին քաղաքական բնագավառներում/միջազգային հարաբերություններ, դիվանագիտություն, կրոն և զաղափարաբանություն, իշխանության կազմակերպում/և հանգամանալից պատկերացնել Հայաստանի պատմական դերը որպես Մերձավոր Արևելքում պատմական պրոցեսների կարևոր, ինքնուրույն գործոնի, առանց որին հաշվի առնելու անկարելի է ունենալ տարածաշրջանի պատմության ամբողջական պատկերը:

Ուսումնասիրության եզրակացությունները կարող են օգտագործվել գիտական զրահանության մեջ, ուսումնական բուհական ժողովներում, կարող են նպաստել քննված հարցերի հետագա հետազոտումներին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ. Առաջին անգամ հետազոտման առարկա են դառնում մեծ տերությունների մշտական հետևանքով Հայաստանում պետական իշխանության և կրոնազաղափարաբանական համակարգի /իշխանության կրոնական հիմքերի/ փոխհարաբերության բնագավառում կրած փոփոխությունները և, սովյալ բնագավառում արտաքին և էքսպանսիային Հայկական պետության վարած դիմադրաման քաղաքականությունը:

Ներկա առենախոսության մեջ լուսաբանվեցին պետականության զարգացման, միջազգային հարաբերությունների, կրոնազաղափարաբանական բնագավառում վարած քաղաքականության պատմության հետևյալ հարցերը.

- մ.թ.ա. 1-ին դարի առաջին կեսին՝ Հայաստանում իշխող դասակարգի կազմակերպական ձևերը, արքայի իշխանության ծավալը և արքունի մեծատոմիկի հպատակության աստիճանը, պետություն՝ իշխող դասակարգ հարաբերության առանձնահատկությունը, իշխանության հարաբերություններ կառնակարգող զաղափարաբանության տարրերը:

- Տիգրան մեծի օրոք մ.թ.ա. 80-70-ական թթ. Պարթևստանի նկատմամբ Հայաստանի արտաքին քաղաքական դոկտրինայի իրագործումը՝ հակապարթևական արտաքին քաղաքական դաշինքների սխեմներ:

- Արտավազդ 2-րդի/55-34/ օրոք Հայաստանի որպես տարածաշրջանում տիրապետության համար հակամարտության վճռորոշ, իր հաջեցողությամբ պատերազմի ելքը պայմանավորող երրորդ կողմի՝ երրորդ ուժի դերը, այդ ուղղությամբ քաղաքականություն ու

դիվանագիտությունը:

- Մ.թ.ա. 20-մ.թ. 298 թթ. ժամանակաշրջանում Հռոմեական կայսրության Հայաստանի նկատմամբ վարած քաղաքականության զաղափարաբանական և իրավական ասպեկտները և դրանց հետևանքով Հայոց թագավորների հեղինակության սրբազան հիմքերի խախտումը, իշխանության ծավալի սահմանափակումը, դրանով իսկ, պետության սուղվերենության կրոնազաղափարաբանական կոմանների ծզնաժամը:

Դրանով իսկ բացահայտվում է 1-4-րդ դդ. Հայաստանի պետական սուղվերենության կրոնազաղափարաբանական վերահիմնավորման պրոբլեմի առկայությունը, վերջինիս վճռորոշ դերը 1-3-րդ դդ. քաղաքական իրադարձությունների ընթացքի համար:

- Նրոնական իրադարձությունը Հայաստանում 1-3-րդ դդ. հասարակության հիմնական դասերի՝ գյուղացիության, քաղաքային բնակչության և ավազանու միջավայրում տարածում գտած կրոնները, և հետևաբար, քրիստոնեության ընդունման նրանց պատրաստականության աստիճանը:

- Հայոց թագավորության հանդեպ հռոմեական կայսրության զերակայությունը վերացնելու և արքայական իշխանության սրբազան /սակրալ/ հեղինակությունը և սուղվերենության ամբողջականությունը վերականգնելու նպատակով Տրդատի վճռական ձեռնարկումները: Բացահայտվում է Հռոմեական կայսրությունից հայոց արքայի կախվածության կրոնազաղափարաբանական հիմքերը խորացնելու խնդրում քրիստոնեության որպես պետական կրոն հռչակելու նշանակությունը:

- Տրդատի արտաքին քաղաքական դիրքորոշումը 306-313 թթ.-ին Հռոմեական կայսրությունում քաղաքացիական պատերազմի նկատմամբ: Հիկինիոս կայսեր հետ Հայոց թագավորի դաշինքը ընդդեմ կայսր Մաքսիմի Դալայի:

- Եվսեբիոս Կեսարացու աշխատության մեջ Հայաստանի դարձի նկատմամբ վերաբերմունքի քաղաքական զաղափարաբանական ասպեկտները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ. Առենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հայցորդի հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով հրատարակված մենագրություններում և գիտական հոդվածներում: Առանձին հարցերի վերաբերյալ կարդացվել են զեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում և դասախոսություններ՝ արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Ատենախոսութիւնն ամբողջութեամբ քննարկվել է ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի հին դարերի պատմութեան բաժնի նիստում: ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ. Աշխատանքը կազմված է նախաբանից, հինգ գլուխներից, եզրակացութիւնից, օգտագործված աղբյուրների ու զրականութեան ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ հիմնավորվում է հետազոտվող թեմայի գիտական կարևորութիւնը, սահմանված են ուսումնասիրութեան նպատակը և խնդիրները, դիտարկված է աղբյուրագիտական բազան, ներկայացված է թեմայի գիտական ուսումնասիրման աստիճանը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԻՄ, Թագավորական իշխանութեան հաստատութեան զարգացման առանձնահատկութիւնները Արտաշեսյանների օրոք/Թագավորը և հպատակները/, հետազոտվում են հին Հայաստանում իշխանութեան հարաբերութիւնները/միջանհատական մակարդակում փոխադրեցութիւններ/իշխանութեան անցկացման միջոցները, զարգացող քաղաքական հիմնադրումը, ավագանու միջավայրում անհատի կախվածութեան աստիճանը Թագավորից, իշխող դասակարգի սոցիալական շերտերը: Զարգացող հարաբերութիւնների այդ ոլորտը զարգանում էր Արտաշեսյանների վարած պետական կենտրոնացման քաղաքականութեան պայմաններում: Նշված հարցերի լուսարանում թույլ է տալիս որոշակի եզրակացութիւնների հանգել Արտաշեսյան և վաղ Արշակունյաց ժամանակաշրջանում հայկական պետութեան սոցիալական, դասակարգային բնույթի մասին:

ՊԼՈՒՏԱՐԵՑՈՒՄ հաղորդումը Տիգրանակերտի արքունիքում Տիգրանին նվաստացուցիչ ձևով ծառայող, սպասավոր-արքաների, մասին /Plut., Luc., XXI, 6 /և տեղայնական, Թագավորութիւնների, /պետական ռազմավարական միավորների վերածվելու մասին Պլինիոսի վկայութիւնը հիմք են տալիս այն եզրակացութեան համար, որ աղբյուրներում արժանազորված են կենտրոնացման քաղաքականութեան հաջորդական փուլերը-կենտրոնական իշխանութիւնը վերացնում էր տեղերում տոհմատիրական ավագանու իշխանապետական կազմավորումները/eghe/:, Թագավորութիւնների, տարածքներում պետութեան իշխանութեան հաստատումով հանձնիս արքայի նշանակած ստրատեգոսների, նշանավորվեց հողի նկատմամբ պետական/արքայական/տիրութեան հաղթանակը: Հին արևելքի հասարակական-քաղաքական զարգացման օրինաչափութիւններին համապատասխանաբար, որոնց մասին նշել էր դեռևս Կ.Մարքսը, արքայական/պետական/ինքնիշխանութիւնը դրսևորվում էր գյուղական հա-

համայնքի հարկահանման, այնտեղ արտադրվող հավելյալ արդյունքի յուրացման միջոցով: 1

Հայաստանն ընդգրկող ռազմավարական միաժույլ ապարատի ստեղծմամբ իրագործվեց պետական կառավարման առավելագույնս կենտրոնացվածութիւնը: Թագավորն այսուհետև անսահմանափակորեն տնօրինում էր երկրի հողաֆոնդը և մարդկային ռեսուրսները: Հայկական պետականութեան ձևավորման պրոցեսը ավարտվում է տոհմային տնդայնական ինքնիշխանութիւնների/սուլվերներ/իշխանների/ վերջնական հաղթահարմամբ:

Ջրկվելով հավելյալ արդյունքը յուրացնել ընձեռող ռազմաքաղաքական իշխանութիւնից, տոհմատիրական ավագանու ներկայացուցիչները, արքաները, տեղահանված լինելով արքունիք, համալրում էին արքունի ռազմածառայողական ավագանու շերտը, որի վրա էր հենվում Թագավորը կենտրոնացման քաղաքականութիւնն անցկացնելիս:

Արտաշատից Տիգրանակերտ ավագանու տեղափոխման մասին Ապպիանոսի/ App., Hist., 34/ հաղորդման քննութիւնը թույլ է տալիս որոշակի հետևութիւնների հանգել արքայական իշխանութեան ծավալի և աղբյուրում նշված ավագանու կարգավիճակի մասին, նաև պատկերացնել իշխանական կառույցի կազմակերպական սկզբունքները:

ա/ Արքան իր հայեցողութեամբ կարող էր որպես հանցանք որակավորել իր հպատակի՝ ավագանու ներկայացուցչի/ *ἄριστος* / զործողութիւնը և պահանջել պատժի տեսակը: իշխանութեան հարաբերութիւնները ենթակա չեն եղել իրավական կանոնակարգմանը:

բ/ Արքան իշխանութիւն ունեւր իր վճռով բացառելու ավագանու /, / ավագույնների, / սեփականութեան իրավունքը՝ իր հայեցողութեամբ բռնազրավել նրանց շարժական գույքը: Այդ փաստը աներկբա է դարձնում նշված ավագանու համար սեփականութեան պայմանական բնույթը և թույլ է տալիս այդ ավագանուն՝ Ապպիանոսի նշած, / ավագույններին, բնութագրել որպես պալատական սպասավորական, ռազմածառայողական շերտ, որի նյութական դրութիւնը լիովին կախված էր արքայի շնորհումներից՝ այսինքն, արքունիքում Թագավորի կողմից ունեւայի վերաբաշխման հետեւանքով:

ԳԼՈՒԽԻՄ քննվում են այն տեքստները, որոնք հունա-հռոմեական աղբյուրներում կիրառվում են Արտաշեսյանների ժամանակ հայ ավագանու կարգավիճակը բնութագրելու համար: Արքայից ավագանու անձնական կախվածութիւնը բնութագրելիս նրանք զործածում են *δοῦλος*, *σείρα*, *servitium* տեքստներ, որոնց համարժեքն է, ծառայութիւն,

1 К. Маркс, Ф. Энгельс. *Նշվ. աշխ.*, նույն տեղում:

հայկական հասկացությունը և որոնք ցույց են տալիս, որ արքայի իշխանությունը անհատի նկատմամբ թեոք էր ընդունված տիրակալման ընդունված։ Արքային անձնուրաց ծառայության սկզբունքը/սեռվիլիզմ/անհատի, որպես իրավունքի սուբյեկտի լուծարումը հիերարխիայում խոչընդոտ էր ծառայողական/պալատական/ավագանու միջավայրում մասնավոր սեփականատիրական հարաբերությունների զարգացման համար։ Ծառայողական ավագանու նյութական ապահովման գլխավոր միջոց էր արքայի նշանակած ուսեստր։ Բաղադրական ծառայությունը/ХОДОБСТВО /հանդես է զալիս որպես իշխող դասակարգի հիերարխիայի էական ասպեկտ ի տարբերություն Ֆեոդալական հիերարխիայի սրան ընդդեմ իմունիտետային արտոնություններով։

Փավստոս Բուզանդի աշխատության մեջ պահպանված տվյալները թույլ են տալիս պատկերացնել արքունական, ծառայական արխտոկրատիայի կազմակերպական ձևի հետագա զարգացումը։ Մոտավորապես 350 թ. վերաբերյալ Փավստոս Բուզանդն արձանագրում է Հայաստանում արքունական մեծաթիվ արհեստավար ընդունակ քուրդկրատիայի դասի գոյությունը։ Կենտրոնական պալատական քուրդկրատիան և տեղերում արքայական վարչությունը պետության գոյության հենց այն ամուր սոցիալական կոմպանն էին, որոնց գոյությունը վկայում է, որ Հայաստանի քաղաքական զարգացումը ընթանում էր պետական կենտրոնացված համակարգերին/Բյուզանդիա, Իրան/ընդդեմ օրինաչափություններով։

Արքայից ավագանու կախվածության ձևերի, նյութական ապահովման եղանակների նկատի առնելը թույլ է տալիս մեկնաբանել Արտաշեսյանների օրոք պետության սոցիալական/դասակարգային/էությունը։ Ավագանու/, լավագույնների, ստրատեգոսների, գործակալների/քաղաքական կազմակերպական ձևերը լիովին համընկնում էին պետական կառույցների հետ, նույնական են եղել նրանց հետ։ Պետությունը հանդես էր զալիս որպես իշխող դասակարգի գոյության ձև, ինքնաբերական սխեմ, այլ ոչ թե տնտեսական իշխող մասնավոր սեփականատիրական դասակարգի քաղաքական և տնտեսական շահն ապահովող գործիք։ Հայաստանի ռազմածառայողական ավագանին՝ իշխանության ապարատը, այլ կերպ ասած՝ թագավորի շուրջը համախմբված արքունիքը, վարչությունը, իր գոյությունը պահպանում էր գյուղական համայնքի հարկային շահագործման շնորհիվ, իրականացնելով կենտրոնացված պետական շահագործում՝ հավելյալ արդյունքի յուրացում տեղերում և վերաբաշխում /ռեդիստրիբուցիա/ կենտրոնում։ Ձևավորված հասարակական-քաղաքական կարգը հնարավոր է ընդլայնել որպես պետական-տիրական սխեմ։

Գլխում ընդգծվում է այն կարևոր հանգամանքը, որ պետական տիրական համակարգը, հիմնված ավագանու անձնական ծառայու-

թյան սեռվիլիզմի սկզբունքի վրա, լուրջ խոչընդոտ էր երկրում Ֆեոդալական մասնավորության և քաղաքական ապակենտրոնացման պրոցեսների զարգացման։ Շանապարհին։ Դիտարկելով տվյալ համակարգի հետագա զարգացումը, հարկ է արձանագրել, որ Հայաստանում տեղ է գտել հասարակության տնտեսական արտադրական միավորի/գյուղացիական հարևանային համայնքի/հարաբերման պայմաններում ինքնակալական պետության, ինքնաբավ այդ քաղաքական համակարգի վերահսկիչ, կանոնակարգող ֆունկցիաների թուլացում տեղական ավագանու նկատմամբ և դրա հետևանքով իշխող դասակարգի շերտավորում։ Հարկ է արձանագրել քաղաքական, , վերնաշենքային, , ծղնածամի առկայությունը, որը սակայն սկսվեց միայն , , վերնաշենքին, , քաղաքական սխեմին/ընդդեմ ինքնուրույն զարգացման/դինամիկայի/հետևանքով։

Գլխում ուշադրություն է դարձվում, որ արքային ավագանու ծառայության հիմնավորման խնդրում նշանակություն ունեցող պատեր-նալիստական ընդունվող զաղափարաբանությունը՝ իշխանության հարաբերությունների իմաստավորում նախպետական մեծ ընտանիքին ընդդեմ հասկացությունների դիրքերից։ Իր հերթին այն խարսխված էր կրոնազաղափարաբանական պատկերացումների համակարգի վրա, որոնց համաձայն արքայի հեղինակությունը ունեցող ընագանց հիմքեր, անմիջապես ծագում էր աստծո հետ տիրակալի կապից և այդ իսկ պատճառով սրբազան էր համարվում։ Թագավորի իշխանության հենց այդ կրոնազաղափարաբանական հիմքերը իր քաղաքականության նշանակետ դարձրեց Հռոմեական կայսրությունը։

Երկրորդ Գլխում , , Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնադրությունների զարգացումը Տիգրան Մեծի օրոք Պարթևստանի հետ հարաբերությունների օրինակով, , քննվում են մ.թ.ա. 80-70-ական թթ. Առաջավոր Ասիայում միջազգային հարաբերությունների մասին Պլուտարքոսի տվյալները և վերաստեղծվում Պարթևստանի նկատմամբ Տիգրան Մեծի առաքին քաղաքականության հիմնական ուղղություններն ու խնդիրները։

Մ.թ.ա. 91-86 թթ. Պարթևստանում Արշակունիների միջև զահակալական կոնֆլիկտի ընթացքում Տիգրան Մեծը աջակցում էր նրանցից նվազ գործող կողմին՝ Միհրդատ 2-րդին, այսինքն, զրավում երրորդ ուժի դիրքը, դրանով իսկ կանխելով Պարթևստանի վերամիավորումը, նպաստելով մի պատերազմի շարունակմանը, որը հյուսիսում էր հակառակորդի ուժերին։

Գլխում քաջահայտվում է պարթևների արևելյան հակառակորդ՝ միջինասիական սակարուկների հետ Տիգրան Մեծի համագործակցե-

լու փաստը: Յուլյո է տված, որ Արաքս գետի կողմից 69 թ. Տիգրանի բանակախմբի նկատմամբ, արքաներին անհնազանդների, ցեղի գործադիր-րուները/Plut., Luc., XXVI, 4 / ներկայացնում էին Ամուղարիայի փոքրիկ բնակավայրի սակարառուներին:

Ի տարբերություն Պուտարքոսի հաղորդման մեջ Տիգրանի մոտ նկատվելի է ժողովուրդների գործերի, Արաքս-Ամուղարիայից եկվորները հայոց թագավորին միանում են նախապես վարձ, ընծաներ, ստանալուց, քարեհամուժյամբ համոզվելուց հետո, : Հայկական Արաքսի որևէ մասում նրանց տեղադրությունը անվերապահորեն բացառվում է, նկատի առնելով Արաքսի ստորին հոսանքի հարավային առափնյա տարածքներում հայկական տիրապետության մասին բազմաթիվ վկայությունները, նաև Ատրպատականի հպատակությունը ապահովելու խնդրում այդ տարածաշրջանը իշխելու ստրատեգիական կարևորությունը Տիգրանի համար:

Այսպիսով, ղաշնակցային հարաբերությունները հաստատելով սակարառուների հետ, Տիգրանը աշխարհագրական աքցանի մեջ էր առնում Պարթևական տերությանը, որը դեռ չէր հաղթահարել իր ներքին դինաստիական պառակտումը:

Հայոց արքայի շահերին լիովին համապատասխանում էր սակարառուների կատարած մեծ ներխուժումը Պարթևստան 77-78 թթ.-ին և նրանց աշակցությամբ այնտեղ Սինատրուկի գահակալումը:

86-85 թթ. Պարթևստանի դեմ պատերազմում Հայաստանի հաղթանակը խթան հանդիսացավ Պարսից ծոցի առափնյա թագավորությունների՝ Խարակենետի/Մեսենի/, Էլիմայիսի և Պարսիքի Արշակունիներից անկախացման պրոցեսի համար: Իր կողմից Տիգրանն այն խրախուսում էր: Ինչպես ցույց է տալիս Պուտարքոսի հաղորդման քննությունը, Բաբելոնի մոտ գտնվող ծովից/Պարսից ծոցից/69-ին Լուկուլլոսի դեմ Տիգրանին օգնության եկած արաքսները Խարակենետի արաքսական թագավորության ուժերն էին: Այդ նույնացման օգտին վկայում է աղբյուրում արաքսների ստույգ տեղադրությունը՝ Պարսից ծոցի հյուսիսային ափին, Բաբելոնի մոտ: Հայոց արքայի հզորությունը Խարակենետի համար պարթևներից անկախության երաշխիք էր:

Պարթևստանի նկատմամբ Տիգրան Մեծի քաղաքականությանը վերաբերվող փաստերի բացահայտումը թույլ է տալիս եզրահանգել Առաջավոր Ասիայում 70-ական թթ. միջազգային իրադրության մեջ կատարված նշանակալից տեղաշարժերի մասին և ի հայտ բերել այդ քաղաքականության սկզբունքները՝ հակառակորդի թույլ կողմերի/ներքին մասնատվածության/առավելագույնս օգտագործում, Արշակունիների ներսո-

մական պայքարին մշտական միջամտություն, որն իրագործվում էր իր հակապարթևական ղաշնակիցների՝ սակարառուների ձեռքով: Ռազմական և դիվանագիտական միջոցների հմուտ կիրառումը թույլ էր տալիս հետևողականորեն հետամտել Պարթևստանի որպես մեծ տերության կազմալուծման և վերացման նպատակին:

ՆՐՐՈՐԻ ԳԼԽՈՒՄ , Հայաստանի արտաքին քաղաքականությունը Արտավազդ երկրորդի օրոք: Երրորդ ուժի դիրքը/նպատակներ, հիմնադրություն, իրականացման միջոցներ/, ընկնում է Հայաստանի քաղաքականությունը Հռոմի և Պարթևստանի նկատմամբ՝ 54-54 թթ. նրանց միջև մեծ պատերազմների ժամանակաշրջանում:

54-53 թթ. հռոմեա-պարթևական պատերազմի ժամանակ Արտավազդը, տեսնելով Հայաստանի անկախության համար զլխավոր վտանգը հռոմեական տերության նվաճողական քաղաքականության մեջ, նպատակ ուներ սատարել նվազ գործող կողմին՝ Պարթևստանին, սակայն առանց պատերազմի մեջ անմիջապես ներգրավվելու:

54-53 թթ. իրադրության առանձնահատկությունն այն էր, որ պատերազմող կողմերը՝ Հռոմն ու Պարթևստանը որոշակի ռազմական կախվածության մեջ էին գտնվում Հայաստանի դիրքորոշումից: Հաղթանակելու համար հռոմեացիները կարիք ունեին հայկական հեծելազորի գինակցության, որը հմուտ էր և վարժ պարթևների դեմ կռվում: Իր հերթին, պարթևները նպատակ ունեին ապահովել Հայաստանի շեղծությունը՝ ստեղծված շահեկան իրադրության մեջ Արտավազդը զրավեց երրորդ կողմին՝ երրորդ ուժի դիրքը, որն իր հայեցողությամբ, իր շահին համապատասխանաբար որոշում է պատերազմի ելքը:

Հակառակ 54 թ. հռոմեա-հայկական պայմանավորվածության, Արտավազդը Կրասոսին շտրամադրեց 16 հազ. արուժի: Պրանով իսկ կանխորոշվեց պարթևական բանակի/10 հազ. հեծյալ/տակտիկական առավելությունը հռոմեականի նկատմամբ և Խարքանի ժակատամարտում Կրասոսի լեգեոնների ջախջախումը: Իր հակահռոմեական գործելակերպը պաշտոնապես ներկայացվում էր իբրև ստիպողական կատարված պարթևական ռազմական մշտական հետևանքով: Գլխում վերլուծվում է Կրասոսի հանդեպ Արտավազդի գործելակերպը, ցույց է տրվում, որ հայոց արքան հմտորեն գործածում էր դիմացի կողմը ապստոհնակացնելու, ապակողմնորոշելու մեթոդները:

Աղբյուրների տվյալների համակողմանի քննությունը անխուսափելիորեն բերում է այն եզրակացության, որ հայոց արքան հռոմեա-պարթևական առհակառակ դիտում էր որպես Հայաստանի աշխարհաքաղաքական պրոբլեմը լուծելու, Հայաստանին շրջափակող տե-

ընթացումների արագացումը/նրանց փոխադարձ հյուսիս-արևելքի-
ընդգծված/թուփակումը հնարավորություն է տալիս արագացումը
գերազանցումը բուխանում էր Մերձավոր Արևելքում Հայաստանի
գերազանցումը իրենց վերականգնման որոշակի հետևանքները:

Գլխում հետազոտվում են Արտավազդի դերը որոշումները
40-38 թթ. հոմեա-պարթևական մեծ պատերազմի հանդեպ: Պարզաբան-
վում է Հոմեա, եռապետ Մ.Անտոնիոսի 36 թ. հակապարթևական ար-
շավանքի պարտությունը մեծ Արտավազդի վճռորոշ դերը: Դիոն Կասիո-
սի, Պլուտարքոսի, Արաբոսի տվյալների քննությունը վկայում է,
որ 40-38 թթ. պատերազմում իր չեզոք դիրքով նպաստելով հոմ-
եական տիրույթներ /Սիրիա, Ֆիլիպիա, Փոքր Ասիա/ ներխուժած պարթևա-
կան բանակների հոմեացիներից ջանքախմբում, Արտավազդը, հաջորդ
37-36 թթ., աջակցելով Պարթևստանի դեմ հարձակողական պատերազմ
վարելու Մ.Անտոնիոսի ծրագրերը, նպատակ էր դնում պարթևների
թուլանալուց հետո հասնել Հոմեա պարտությանն ու ուժերի հյուս-
մանը: Հայոց արքայի ապակողմնորոշիչ գործելակերպը պատճառ հան-
դիսացավ հոմեական զորավարի ռազմավարական լուրջ սխալների
և դրանց հետևանքով անխուսափելի պարտության: Հայոց արքայի ազ-
դեցությունը փոխվեց պատերազմական ծրագրեր և արշավի ելանք բա-
նակը, բաբելոնիայում պարթևական տերության քաղաքական կենտրոն-
ների, դեմ գործելու փոխարեն, Հայաստանի վերայով, երկարատև և շրջան-
ցիկ մանապարհ կատարելով, ներխուժեց Արտավազդի մայ-
րաքաղաք Փրասպայի անպաշտպանվածությունը մասին Անտոնիոսին Հա-
յաստանում տված կեղծ ինֆորմացիան պայմանավորեց հոմեական բա-
նակը մասնատելու և առանց պաշարողական տեխնիկայի առաջ շարժ-
վելու եռապետի որոշումը, որը մակատագրական դարձավ արշավանքի հա-
մար: Պատերազմում առկա էր նաև զադոնի դիվանագիտության դերը:
Գլխում հարցի հետազոտման պատմության մեջ առաջին անգամ քա-
ղաքական իրադարձությունների կոնտեքստի մեջ է գետնի վրա դրվում
Կասիոսի այն արժեքավոր տեղեկությունը, որ Անտոնիոսի դեմ Արտա-
վազդի հետ զադոնի համագործակցում էր Օկտավիանոսը: Բերված են
աղբյուրների վկայությունները, որոնք հաստատում են Դիոն Կասիոսի
այդ հաղորդումը, վկայելով Անտոնիոսի պարթևական արշավանքի ձախող-
մամբ Օկտավիանոսի շահագրգռված լինելու մասին:

40-36 թթ.-ին Արտավազդի արտաքին քաղաքականության մասին
տվյալների քննությունը թույլ է տալիս սահմանել հոմեա-պարթև-
ական առժամատևյալ մեծ երրորդ ուժի դեր կատարող Հայաստանի գործե-
լակերպի հիմնադրույթները.

ա/ Հոմեա-պարթևական կոնֆլիկտում վճռական բեկում թույլ
շտալ առավել ուժեղ, ազդեցիկ կողմի՝ Հոմեա օգտին, և համապատաս-
խանաբար, ստարել նվազ գործող Պարթևստանին. բ/ աջակց լինելով
նվազ գործողին, չնպաստել նրա շահագանցումը ուժեղացմանը, այլ ապահո-
վել այդ կողմի Պարթևստանի ռազմական և ստրատեգիական կախա-
նությունը Հայաստանից: Գ/ Երրորդ կողմը՝ երրորդ ուժը պայմանա-
վորում է պատերազմի անվճարական քննարկում, նպաստում երկու կող-
մի փոխադարձ թուլացմանը, բացառելով նրանցից որևէ մեկի/մասնա-
վորապես, ավելի վտանգավոր Հոմեա/հաղթանակը: Հոմեա և Պարթևստանի
միջև որոշակի ուժային անհավասարություն պահպանումով ապահովու-
թյուն էր ձեռք բերվում նրանց միջև փոխամաժաշակությունից
ընդդեմ Հայաստանի, քանի որ մեծ տերությունների միջև կայուն
խաղաղության հաստատումը հղի էր Հայաստանի շահերի դեմ քա-
ղաքական լուծումներով:

36 թ. աշնանը Օկտավիանոսի ներքո հոմեական Արևմուտքի
միավորվելը վճռական տեղաշարժ էր նշանակում միջազգային բե-
մահարթակում ուժերի դասավորման մեջ: Գլխում հիմնավորվում է
այն կարևոր փաստը, որ 35-34 թթ. Հայաստանի համար գլխավոր վը-
տանգը Արտավազդը տեսնում էր իր նախկին հակաանտոնիոսյան հա-
մախոհի՝ Օկտավիանոսի արագ զերհզորացման մեջ, նրա աշխարհակա-
նապաստաններում: Նոր իրադրությունը պահանջում էր Արտավազդից
խաղաղաբար, դիվանագիտական միջոցներով լուծել Անտոնիոսի հետ
կոնֆլիկտը: Կանխատեսելով Անտոնիոսի և Օկտավիանոսի միջև պա-
տերազմը, Արտավազդը չէր կամենում Անտոնիոսի դեմ պատերազմով
թուլացնել նրան՝ նվազ գործող կողմին այդ պատերազմում և դրանով
իսկ նպաստել Օկտավիանոսի հաղթանակին և հոմեական աշխարհա-
կալության վերամիավորմանը:

Գլխում նաև պարզաբանվում են 35-34 թթ. Մերձավոր Արևել-
քում ձևավորվող իրադրության մեջ Հայաստանի համար պարփակ-
ված բարենպաստ հեռանկարները, Արտաշատի բանակցությունների խա-
փանման պատճառները և այլն: Օգոստոսի օրոք Հայաստանի համար
հաստատվեց կախվածության յուրահատուկ ձև, որը կապված էր հայոց
արքաների կողմից իշխանության ստանձնման հետ և ունեւր կրոնա-
գաղափարաբանական հիմնավորում: Կայսրությունից Հայաստանի կախ-
վածության տվյալ ձևը հարատևեց հաջորդ 1-3-րդ դարերում: Այն
սկիզբ դրեց հիմնարար քաղաքական մի պրոբլեմի:

2000 թ. Գլխում, Հայոց արքան և Հոմեա կայսր. թագա-
վորի և թագավորական իշխանության մասին պատկերացումները Հա-
յաստանում և Հայաստանի նկատմամբ Հոմեա քաղաքականության գա-

դափարաբանական և իրավական ասպեկտները, ,/մ.թ.ա.20 - մ.թ.298թթ./
քաղաքացիական և հն Հռոմեական կայսրության Հայաստանի նկատմամբ
վարած քաղաքականության գաղափարաբանական և իրավական ասպեկտները,
նրա նշանակությունը Հայաստանում թագավորական իշխանության
մասին ավանդական պատկերացումների հարադեման համար և դրա
հետևանքով պետության կրոնազափարաբանական հիմքերի առաջացած
ճգնաժամը:

Մ.թ.ա.20 թ. Հռոմեական կայսրության գերակայությունը Հա-
յաստանի նկատմամբ, որ հաստատել տվեց Օգոստոսը, տեսականորեն
կայանում էր նրանում, որ հռոմեական կայսրը համարվեց Հայոց թա-
գավորի իշխանության աղբյուր: Այսպես այդ հավանությունը իր
արտահայտությունը գտավ կայսեր կամ նրա ներկայացուցչի ձեռ-
քով արքայի թագադրման ակտում: Պարտադրելով Հայաստանին կախի-
մության տվյալ ձևը հռոմեական կայսրը իր նկրտումներին էր
հարմարեցնում արքայական իշխանության աստվածային ծագման, աստ-
վածատուր բնույթի մասին հին արևելյան և հայկական հասարա-
կություններին բնորոշ ավանդական պատկերացումները: Հայոց արքայի
սրբազան լինելու մասին պիկերոնի, Սալլուստիոսի, Ստրաբոնի վկա-
յությունները, դրամների ետին կողմի վրա արքայի հովանավոր աստ-
վածների պատկերները, վկայում են հին Հայաստանում/Արտաշեսյան-
ներ, 1-ին դ.Արշակունիներ/թագավորական իշխանության աստվածա-
տրություն վերաբերյալ կայուն պատկերացումների գոյության մասին:
Հռոմեա-հունական հրավոր աղբյուրների ցուցումների, հռոմեական դը-
րամների երեսին թագադրման ակտի տեսարանների, նրանց մեկնաբանող
գրությունների բնությունը վկայում է, որ հռոմեական կայսրը
հայոց արքային թագադրելով, իշխանության նշաններ նրան հանձնելով,
յուրացնում էր հայկական դիցաբանի արքայաստեղծ, արքային գերագույն
իշխանություն շնորհող աստծո ֆունկցիան, հավանում էր անմիջա-
կանորեն հանդես գալ այդ աստծո դերում: Որպես կանոն կայսրը
իր հայեցողությամբ էր որոշում զահի թեկնածուին:

Գլխում մեծ ուշադրություն է հատկացվում կայսեր ձեռքով
հայոց արքաների թագադրման նշանակությանը Հայաստանի միջազ-
գային-իրավական դրություն բնորոշման համար, դրա վերաբերյալ Հռո-
մում ընդունված պաշտոնական մեկնություններին: Հայերին թագա-
վոր տալու/թագադրության ակտի միջոցով/կայսեր առանձնաշնորհ
գնահատվում էր որպես Հռոմեական կայսրությունից Հայաստանի
կախվածության յուրահատուկ ձև/servitutis genus.L.A.Florus, II, 32)
Այսպես դրանով իսկ իրագործում էր իր potestas գերագույն

կարգադիր իշխանությունը, հետևաբար, Հայաստանը համարվում էր հպա-
տակ երկիր, որը ենթակա էր հռոմեական, իրավունքին, : Հռոմեական
հեղինակների վկայությունները հաստատում են և համալրվում թա-
գադրությունների առթիվ Հռոմում թողարկված դրամների վրա ար-
քայաստեղծ տեսարանների քննության շնորհիվ: Այստեղ պատկերված
կայսեր և հայոց արքայի ժեստերի նշանաբանությունը և հաջոր-
դականությունը Օիշտ արտացոլում են թագադրման ակտի մասնակից-
ներից յուրաքանչյուրի կարգավիճակը, նրանց միջև փոխհարաբերու-
թյունների բնույթը, թագավորական արժանիքների/, , արքայականության, ,/
հանձնման բուն պահը:

Հռոմեական կայսեր կողմից արքային իշխանության, , թագավո-
րության, , հանձնման ակտի ողջ նշանակությունը գնահատելու համար
անհրաժեշտ է նկատի ունենալ հին Մերձավոր Արևելքի հասարակու-
թյուններում/և Հայաստանում/արքայի և արքայական իշխանության
բնույթն ու հասարակական ֆունկցիաները: Արքայական իշխանության
նշաններում մարմնավորվում էր զահակալի արքայականությունը, ¹ աստ-
ծուց ստացած գերբնական, սովորական մահկանացուից նրան առանձնաց-
նող որակները՝ եռանդը, ուժը, ֆուռը/փառքը/, օրինակ, Տիգրան Մեծի աստ-
վածատուր դամոնը, , ոգին, միայն որոնց շնորհիվ հին արևելյան
արքան կարող էր կատարել իր միջնորդական ֆունկցիան աստվածնե-
րի աշխարհի և մարդկանց աշխարհի՝ հասարակության միջև: ² Միայն աստ-
ծո հետ կապի շնորհիվ արքան կարող էր ծանաչվել հասարակության
/սոցիումի/կենսագործունեությունը կանոնակարգող առանցքային, սրբազան
ֆիգուր: Արքայական իշխանությունը Հայաստանում զրկվեց իր աստվա-
ծատուր բնույթից, հայոց արքան այլևս աստվածակարգ չէր: Հին արևել-
յան և հելլենիստական պետական զաղափարաբանության գործելու օրի-
նակները վկայում են, որ արքայի աստվածատրության, իշխանության աստ-
վածային ծագման մասին պատկերացումները վերացական բնույթ չէին
կրում, այլ ամեն անգամ իրազնաբար հաստատվում էին թագադրման ա-
րարողության ժամանակ: Հայոց թագավորի աստվածակարգից կայսերա-
կարգ դառնալու հետևանքով բնակչության լայն շերտերում անխուսա-
փելիորեն խաթվում էին նրա մասին պատկերացումները իբրև սրբա-
զան, աստվածահղորդ անձի: Պետական/արքայական/իշխանությունը, արքայի
հասարակական ֆունկցիաները զրկվում էին անհրաժեշտ հեղինակու-

1 И.П. Вейнберг. նշվ. աշխ. с. II 7.

2 P. Briant. Appareil d'Etat et développement des forces pro-
ductives au Moyen-Orient Ancien. Le cas de l'Empire scheme-
nide. Op. cit. p. 493. И.П. Вейнберг. նշվ. աշխ., с. I 27.

թյունից, այլևս սրբագործված չեն եղել բարձրագույն, աստվածային կամքով: Տեղի էր ունենում Հայաստանում պետութային գոյության կրոնազաղափարաբանական հիմքերի քայքայման պրոցեսը:

Ցուրացնելով թագավոր ստեղծող աստծո դերը Հռոմի կայսրը կրոնական և իրավական հիմնավորում էր ստանում խախտելու Հայաստանի թագավորական իշխանության ժառանգական բնույթը: Կայսեր ձեռքից իշխանություն ստացած թագն ու դիադեման ընդունած, արքան իր երկրի սեփականատեր, ինքնիշխան չէր համարվում: Դա դրսևորվեց արդեն մ.թ.ա. 8-ին, երբ Օգոստոսը ոտնահարեց Տիգրան 3-րդի որդի Տիգրան 4-րդի ժառանգության իրավունքը և կայսեր, ,հրամանով, նրա փոխարեն հայոց զահակալ կարգվեց Արտավազդ 3-րդը:

Թագավորության հասկացությունը ընկեցվում էր արքայի՝ աստվածակարգ տիրակալի գոյության փաստից/առանձին որպես աքստրակտ, վերացական հասկացություն թագավորական իշխանությունը չէր ըմբռնվում/, իր հերթին, թագավորի կարգավիճակը պայմանավորվում էր իշխանության նշաններով, սրբազան պաշտելի առարկաներով, որոնց միջոցով աստծուց փոխանցվում էին բնազանց որակները՝ եռանդը, փառքը/Փառն/, կորովը: Հայաստանում պաշտամունքի առարկա են եղել թագավորական իշխանության նշանները՝ թագը, դիադեման, ծիրանին, զենքը: Այդ հասկացողությունից ելնելով հռոմեական կայսրերը, տիրանալով հայոց արքաների թագին/տիրային, դիադեմային, ադելին/հանդես էին զալիս իբրև թագավորության տիրողներ՝ սեփականատերեր, և այդ կարգավիճակով, շնորհում էին, այն իր ընտրած թեկնածուին: Կայսեր ձեռքից ստացված թագավորությունը Հռոմի ժողովրդի սեփականություն էր դիտվում/ *pecunia* /, որը իբրև ընծա/*donum, munus*/ հանձնվում թագավորին:

Աղբյուրների տվյալների քննությունը ցույց է տալիս, որ Հռոմեական կայսրերը Հայաստանի արքային թագադրելու իրենց իշխանությունը/ *potestas* / օգտագործում էին արքայական իշխանության հեղինակազրկման և թուլացման նպատակներով: Առկա էր արքային ապաստարան տրամադրելու խնդիրը: Արքայի թագադրման արարողությունից վերացավ տիրան:

Արտաշեսյանների արքայանշաններում տիրայում և դիադեմայում, անշուշտ, իր արտահայտությունն էր ստացել Հայաստանում թագավորական իշխանության ըմբռնումը որպես պաշտամունքային/քրմական/և ռազմավարական ֆունկցիաների համատեղություն: Այլ կերպ ասած, նրանց մեջ առարկայապես արտահայտվեցին գերագույն իշխանու-

թյան հաստատության սրբազան և ուժային հիմքերը: Տիրայով օժտվելը պիտի բարձրագույն հեղինակություն հաղորդեր արքայի վճիռներին և պատահական չէր, որ հողային հարաբերություններ կարգավորելու մասին Արտաշես 1-ի որոշումները զրկած են եղել տիրայի աստմաների պես ելուստներ ունեցող քարերի վրա: Տիրայի վրա հնազույն տիեզերական խորհրդանշանները արտացոլում էին արքայի մասին հնազույն ավանդական պատկերացումները իբրև աշխարհի և հասարակության կենտրոնական ֆիգուրի և վկայում են հայկական տիրայի տեղաբնիկ ծագման մասին:

Վերը բերված նկատողումների լույսի ներքո բացատրություն է ստանում այն փաստը, որ Հռոմի նշանակած արքաների մեծամասնությունը/Արտավազդ 4-րդ/3-4/, հավանաբար Արիոբարդան, Միհրդատ իբերացի /41-52/, Սոսիմոս /141-163/, /163-192/, ինչպես նաև Արշակունիների կողմից հաստատված Պարթմասիր /114 թ./ և այլք կրում են միայն դիադեման: Հայաստանի թագավորին պարտադրելով միապետական իշխանության հելլենիստական կոնցեպցիան, որը բնորոշ էր նաև պարթև Արշակունիներին, Հռոմը վերացնում էր աստվածների աշխարհի հետ նրա միջնորդական, պաշտամունքային ֆունկցիան, դրանով իսկ նսեմացնում արքայի ինքնիշխանության ծավալը, ապաստարանում հպատակների առաջ:

1-2-րդ դդ. հայ-հռոմեական հարաբերություններին ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ հայերը՝ ավագանին և ժողովուրդը համադրեն մերժում էին Հռոմի պարտադրած կախվածությունը: Վտանգի ողջ ծավալը քաջ գիտակցվում էր Հայաստանում:

Արքայի ընկալումը որպես աստվածների աշխարհի և ժողովրդի միջև միջնորդի, որին սակրալային/սրբազան/հեղինակությունն ու իշխանությունը անմիջապես շնորհում էր աստվածը՝ թույլ է տալիս եզրահանգել, որ մ.թ.ա. Հայաստանում ազգային անկախության հասկացողությունը անքակտելիորեն կապված էր աստվածակարգ թագավորի գաղափարի հետ, արտահայտվում էր աստվածակարգ արքա ունենալու պահանջի տեսքով: Այդ կարևոր հանգամանքը դիտարկելի է Հռոմի հետ Հայաստանի հարաբերությունների բազմաթիվ փաստերում, հայկական կողմի կոնկրետ գործելակերպերում: Լ. Ֆլորոսի մինչ այդ չուսումնասիրված հաղորդման քննությունը ցույց է տալիս, որ մ.թ. 2 թ. Հռոմի դեմ իր ռազմական ելույթի ժամանակ հայ ավագանին մերժում էր հայոց թագավորի զահակալման ձևը՝ կայսեր ձեռքով թագադրությունը: Այդ կարևոր հաղորդման լույսի ներքո ակնհայտ է դառնում Հայաստան մեծ բանակով ներխուժած Գայոս Կեսարի դեմ Ար-

տագերսի մոտ Աղդոնի կատարած մահափորձի քաղաքական իմաստը: Արտագերս ամրոցի պարիսպը նպատակ ունի խափանել Արիորաբյանի թագադրումը: Երևանը, աստվածային, Օգոստոս կայսեր ժառանգ և ներկայացուցիչ Գայոս Կեսարի ձեռքով: Գրականության մեջ հայկական քաղաքական շահը 52-66 թթ. հռոմեա-պարթևական պատերազմում նույնացվում է պարթև Արշակունիների Հայաստանում իրենց կրտսեր տոհմաժողովը հաստատելու նպատակի հետ: 1 իրականում Հայաստանի ինքնուրույն պետական շահը՝ ունենալ աստվածակարգ և անկախ արքա, չիրագործվեց 66 թ. հռոմեա-պարթևական պայմանագրով: Տրդատ 1-ինի զահակվածամբ հայկական միապետական հաստատությունը դրվեց մեծ տերությունների կրկնակի վերահսկման տակ:

2-րդ դ. հռոմեական կայսրությունը, 113-117 թթ. մեծ պատերազմից հետո կրկին խախտելով 66 թ. հռոմեա-պարթևական կոմպրոմիսի պայմանը, վերականգնեց Հայաստանի զահի վրա արքա կարգելու իր մենաշնորհը/141 և 163 թթ. ոչ Արշակունի Սոհմոսի թագադրությունները/:

Հայերի փորձերը թողափել հռոմեական կայսրության գերակայությունը հաջողություն չեն ունեցել: 2-րդ դ. վերջին Արշակունիները հաստատում են Հայաստանում որպես ժառանգական արքաներ, որոնք այլևս ենթակա չեն եղել այդ ժամանակ թուլացած պարթև, արքայից արքաների, վերահսկմանը, սակայն դեռ իշխանության նշաններ ստանում էին կայսրից/197, 218/: Հայ Արշակունիների կայսերակարգ լինելը իրենց զաղափարաբանական և իրավական խոցելի կողմն էր Ասասյանների դեմ պայքարում/232-260 թթ./, որոնք հանդես էին գալիս որպես Ահուրամազդից թագավորություն/նախնյաց փառքը/ընդունած, աստվածակարգ զահակալներ:

Գլխում քննվում են Տրդատ 3-րդի նախաթագավորական շրջանի գործունեությունը վերաբերվող տվյալները/Պայկունիի արժանագրություն, Ազաթանգեղոսի, Մովսես խորենացու հաղորդումներ/Հայաստանում Ասասյանների տիրապետության շրջանում: Արշակունի արքայազնը սկսած 288 թ.-ից պաշտոնապես հանդես էր գալիս որպես հայոց զահի հավակնորդ և ամենայն հավանականությամբ հայոց թագավոր մանաչվեց հռոմեացիների կողմից:

ՀինԳեորգի Գլխում, Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու քաղաքական և զաղափարաբանական նպատակները, նշվում է, որ թագավորական իշխանության կողմից Հայաստանի վճռական քրիստոնեացումը կարող է բացատրվել ստանալ

1 Հ. Մանանդյան, Քննական տեսություն... Երկեր, հ. Ա., էջ 320-346:

միայն անցյալից երկրի ժառանգած զաղափարաբանական և քաղաքական պրոբլեմները հաշվի առնելու դեպքում: Հետևաբար, հիմնավոր է առաջադրել հաղցարումը քաղաքական այն խնդիրների մասին, որոնք թագավորական իշխանությունը պիտի լուծեր քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելով:

Գլխի, Պատմագիտական ավանդույթներ, բաժնում նշվում է, որ սովետահայ պատմագիտության մեջ քրիստոնեության ընդունման հարցը դիտարկվում էր տնտեսական բազիսով քաղաքական և զաղափարաբանական վերնաշենքի պայմանավորվածության մասին ուսմունքի դիրքից/ընդհանուր բնույթի աշխատություններ, ուսումնական ծեղարկներ/: Հայաստանի դարձը բացատրվում էր իբրև դասակարգային/ֆեոդալական/ զաղափարաբանության հաղթանակ՝ ստրկատիրական հասարակարգի՝ ֆեոդալականով փոխարինվելու հետևանքով: 1

Քրիստոնեությունը իբրև ստրկատիրական հասարակարգին փոխարինած ֆեոդալական հասարակարգի զաղափարաբանություն մեկնաբանող տեսակետը, աչքաթող է անում հին հայկական, պետության ինքնաբավ բնույթը, սոցիալական էությունը, պետության ինքնուրույն տնտեսակազմակերպչական ֆունկցիան հասարակության հանդեպ:

Այստեղ հարկ է նկատի ունենալ, որ արդեն ուշ սովետական պատմագիտության մեջ վերանայվեց քրիստոնեության գնահատականը իբրև դասակարգային/ֆեոդալական/ հասարակության զաղափարաբանություն: 2 Իսկ հին Հայաստանի հասարակական զարգացմանը վերաբերվող տվյալները անհերքելի են դարձնում այն փաստը, որ հայկական հասարակությունը սկզբունքորեն, տիպաբանորեն չէր տարբերվում հին արևելյան հասարակություններից/Աքեմենյան իրան և այլն/, որոնք չեն անցել, ստրկատիրական հասարակարգի, փուլը: Ահրաժեշտ է նշել, որ քրիստոնեության հնարավոր տարածման շափերը պատկերացնելու համար ցուցադրական չեն կարող լինել առանձին բարոգիչների գործունեության փաստերը: Ատենախոսության մեջ առաջադրվում է այն մոտեցումը, որ տվյալ հարցի լուծման համար վճռորոշ պիտի լինի Հայաստանի բնակչության տարբեր սոցիալական դասերի կողմից քրիստոնեության ըմբռնման պատրաստականության աստիճանը: Քարոզի

1 Հ. Գ. Ժամկոչյան, Ա. Գ. Աբրահամյան, Ս. Ս. Մելիք-Բախչյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1963, էջ 283: Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ֆեոդալական հարաբերությունների ձևավորման ժամանակաշրջանում: - Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ, Երևան, 1984, էջ 71:

2 Г. Л. Курбатов, Э. Д. Фролов, И. Я. Фроянов. Христианство: Античность. Византия. Древняя Русь. Ленинград. 1988. С. 12.

հաջողությունը կախված էր նոր կրոնը յուրացնելու ունակությունից, ինչն իր հերթին կարող էր պայմանավորվել հին կրոնական գիտակցության որոշակի ձգնաժամով: Այսպիսով, ատենախոսության մեջ ընդգծվում է քրիստոնեացման նախօրեին Հայաստանում կրոնական իրադրության պարզաբանման գիտական կարևորությունը:

Մյուս կարևոր հանգամանքը, որի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձվում ատենախոսության մեջ՝ դա հոռոմեա-հելլենիստական/անտիկ/ և հայկական/արևելյան/հասարակությունների քաղաքակրթական տարաբնույթությունն է և, հետևաբար, երկու դեպքում քրիստոնեության ըմբռնման և տարածման տարբեր պատճառների գոյությունը:

Գլխի բաժնում, կրոնական իրադրությունը Հայաստանում քրիստոնեացման նախօրյակին, առաջին անգամ քննվում են բնակչության երեք հիմնական դասերի՝ համայնական գյուղացիության, քաղաքային բնակչության, ավագանու կրոնական պատկանելության մասին տվյալները և, հետևաբար, նրանց միջավայրում քրիստոնեության ըմբռնման առանձնատկույթունները:

Գյուղացիության կրոնական կողմնորոշումներին նվիրված ենթաբաժնում Փավստոս Բուզանդի/Ե. Դ. ԺԳ/ վկայության քննությունը ցույց է տալիս այդ դասի, ինչպես նաև նախարարության զգալի մասում հակաքրիստոնեական տրամադրությունների իշխանությունը դեռևս 340-ական թթ.: Փավստոս Բուզանդը ներկայացնում է բնակչության լայն զանգվածներ ընդգրկած կրոնազաղափարաբանական ընդդիմության երևույթ: Ըստ Փավստոս Բուզանդի քրիստոնեության հանդեպ մերժողական վերաբերմունքի պատճառներից էր բնակչության նվիրվածությունը առասպելին և վեպին: Փավստոս Բուզանդի տեղեկությունները հիմք են տալիս հանգելու այն եզրակացության, որ քնարերգական ձևով գոյություն ունեցող առասպելը՝ մյուս կողմից՝ արքայի, ավանդապահ, տվյալ դեպքում կոնկրետ գյուղացիական հասարակական գիտակցության ձևը, հանդես է գալիս որպես նոր կրոնական գիտակցության՝ անդրաշխարհյան աստծո զաղափարի ընդդիմադիր: Կոնկրետ զգայական, առասպելաբանական աշխարհընկալումը խոչընդոտ էր աստծո վերացական ըմբռնման համար և դրսևորվում էր գյուղացիական միջավայրում կոապաշտության տեսքով: Հայաստանում հեթանոսական հավատալիքները՝ Արայի, Անահիտի, Աստղիկի պաշտամունքները մզնաժամ չէին ապրում/և շարունակվում էին գյուղում բացօթյա կատարվել դեռևս 340-ական թթ.-ին/: Քրիստոնեությանը ցույց տված ընդդիմության պատկերը, որն ի հայտ է գալիս Փավստոս Բուզանդի տվյալներից,

լիովին համապատասխանում է Հռոմեական կայսրության փոքրասիական մարզերի/Գալաթիա, Փոյուզիա, Լիկաոնիա/ գյուղացիական միջավայրում քրիստոնեության նկատմամբ վերաբերմունքին: Փավստոս Բուզանդի տված պատկերը նոր կարևոր լրացում է ծառայում գիտության մեջ ընդունված այն դրույթին, որ գյուղացիությունը կրոնական աղուժով բնակչության ամենապահպանողական շերտն էր:

Գիտության տրամադրության տակ առաջմ չկան հայկական քաղաքներում քրիստոնյա համայնքների գոյությունը հավաստող անմիջական վկայություններ: Հոփսիմեի և Գայանեի պատմության մեջ քաղաքային միջավայրը պատկերված է իբրև թշնամական՝ քրիստոնյա քարոզիչների համար: Այնուամենայնիվ, հարկ է ընդունել, որ քաղաքային հելլենիստական խավերի համար միաստվածության բնորոշ միտումը պիտի դրսևորվեր քրիստոնեության տարածմամբ: , Հայաստանի քաղաքների բնակչության կրոնական պատկանելության հարցը/մ.թ.ա. 1-մ.թ.4-րդ դդ./, ենթաբաժնում քննվում է նախաքրիստոնեական շրջանի քաղաքային բնակչության միջավայրում տեղ գտած կրոնական հակվածությունները:

Հայաստանի քաղաքներ 1-2-րդ դդ. հրեաների ներգաղթի հետևանքներից էր Հայաստանի քաղաքային հելլենիստական բնակչության զգալի մասի, նաև հայ ավագանու առանձին ներկայացուցիչների կողմից հրեական կրոնին հաղորդվելը՝ նորադարձությունը: Փավստոս Բուզանդի հաղորդման մեջ, հրեա, բնակչության անվան տակ ներկայացված են մեծ մասամբ ոչ թե էթնիկական հրեաներ, այլ, նորադարձներ, հրեություն, ընդունած տեղացի հելլենիստական բնակչություն, որի նախնիները/կիլիկիացի հույները, ադիաբենցիները, կապադովիացիները/ վերաբնակեցվել են Հայաստանում Տիգրան Մեծի կողմից: Այդ հանգամանքը հիմք է ծառայել Փավստոս Բուզանդի այն պնդմանը, թե , հրեաներին, Հայաստանում բնակեցրեց Տիգրան Մեծը: Ըստ երևույթին, հուղայականությունը/մովսիսական կրոնը/մ.թ. 1-2-րդ դդ. դարձել էր հայկական քաղաքների՝ միաստվածությանը հակված հելլենիստական բնակչության դավանություններից մեկը:

Ավագանու կրոնական նախապատվությունների մասին ենթաբաժնում քննվում է իրանական տերության պետական կրոն դարձած ղոգմատիկ զրադաշտականության տարածումը Հայաստանում Ասսանյանների տիրապետության շրջանում: Հայ ավագանու զրադաշտականացման քաղաքականությամբ Ասսանյանները նպատակ էին դնում իրենց համար ապահովել հայ ավագանու՝ ձևավորվող նախարարական դասի գաղափարաբանական համաձուլումը իրենց տերության իշխող դասակարգի

հետ: Փախստոս Բուզանդի արժեքավոր վկայություններով զրադաշտականությունը դեռևս 4-րդ դարի կեսերին խոր ազդեցություն էր պահպանում հայ ավագանու միջավայրում. այն 367 թ. հակապետական նախարարական ապստամբության զաղափարաբանական սլափարն էր: Ավագանու միջավայրում զրադաշտականության ազդեցության աժին և սասանյանամետ տրամադրությունների ամրապնդմանը պիտի նպաստեր, ինչպես ընդգծվում է ատենախոսության մեջ, Արշակունիների միապետական հեղինակության վարկաբեկվածությունը, վերջիններիս կայսերակարգ լինելը, ինչպես նաև 3-րդ դ. պատերազմական իրավիժակում Փեռզականացող ավագանուն արտոնություններ շնորհելու, սիրաշահելու քաղաքականությունը, որ վարում էին Արշակունիների հակառակորդներ՝ Ահուրամզդի ընտրյալներ, աստվածակարգ Սասանյանները: Հելլենիզմի դարաշրջանում, ոչ հետևողական, սինքրետիկ ուսմունք դառնալով, զրադաշտականությունը գոյակցում էր Միհրի պաշտամունքի հետ կամ էլ, վերափոխելով ամենակալ և անդաշտարհիկ աստծո զաղափարը հաստատող ուսմունքի իր բնույթը, համաձուլվում էր բնական ուժերի պաշտամունքների հետ: Այդ առումով հատկանշական էր Ջևահիր/նախկին Տորքի/ նույնացումը Ահուրամզդի հետ:

„Կրոնական իրադրություն վերաբերյալ ընդհանուր եզրակացություններ, ենթադրաբար Հայաստանի սոցիալական դասերի դավանությունների մասին տվյալների բնությունը ակնհայտ է դարձնում, որ 2-3-րդ դդ.-ին Հայաստանի դասային շերտավորումը ստացավ կրոնազաղափարաբանական գունավորում, մի երևույթ, որը կարող էր միայն նպաստել բնակչության նշված շերտերի հետագա փոխադարձ օտարացմանը: 4-րդ դարի շեմին ձևավորված կրոնական իրադրությունը ի հայտ է բերում Հայաստանի որպես էթնոքաղաքական, մշակութային, հոգևոր ամբողջականության տրոհման միտումներ: Այդ տեսանկյունից քրիստոնեության որպես պետական կրոնի ընդունումը մոռական կասեցում էր նշանակում այդ վտանգավոր միտումների զարգացման մեջ: Ակնհայտ է, որ քրիստոնեությանը նվազ ազդեցություն ունեցող կրոնին պետական կարգավիժակ հաղորդելով, թագավորական իշխանությունը առաջնորդվում էր Հայաստանի ազգային պետական շահերով:

Հայաստանի ազգային պետական խնդրի նախորդ դարերից ժառանգած քաղաքական զաղափարաբանական պրոբլեմի լուծումը Տորքի 3-րդի կողմից բացահայտվում է, Տորքի քաղաքական խնդիրները: Հայոց թագավորը և Հռոմի կայսրը մ.թ. 4-րդ դարի սկզբին, բաժնում:

298 թ. Հռոմեական կայսրության և Սասանյան իրանի միջև կնքված հաշտության վերականգնվեց Հայաստանի թագավորությունը Արշակունի արքա Տորգատ 3-րդի գլխավորությամբ:

Տորգատի խնդիրն էր՝ վերականգնել կենտրոնացված պետությունը, իր շուրջը համախմբել մեծատոհմիկ ավագանուն, որը մեծ մասամբ զրավում էր սասանյանամետ դիրքեր և զրադաշտականություն էր դավանում: Արքայի աստվածակարգ հեղինակության և սուվերետության վերականգնումը այդ նպատակի իրագործման անհրաժեշտ նախապայմանն էր: Սակայն Տորգատը, անձամբ Դիոդորեանոս կայսեր կողմից թագադրված, իր հպատակների համար կայսերակարգ էր:

Ատենախոսության մեջ առաջին անգամ ցույց է տրվում Հայաստանում քրիստոնեության ընդունման փաստի նշանակությունը հայոց թագավորի և հռոմեական կայսեր միջև ավանդական, ոչ իրավահամար բնույթի փոխհարաբերությունների զարգացման տեսանկյունից: Որպես պետական կրոն ընդունվեց կուռ միաստվածային դավանություն, որն անվերապահորեն ժխտում էր հռոմեական կայսեր անձնական աստվածայնությունն ու պաշտամունքը, հանդես գալով աստծո դերում: /Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հռոմեական կայսրության արևելյան մասը կառավարած կայսրերը, Տորգատի անմիջական հարևաններ՝ Գալերիոսը/305-311/, Մաքսիմին Դալան/311-313/, Լիկի-նիոսը/313-324 / եղել են համոզված հեթանոսներ/: Ժխտվեցին հայոց արքայի հետ հարաբերություններում գերագույն, աստվածացված առյանի դերում հանդես գալու կայսեր դարավոր հավանությունը, զրանով իսկ Հայաստանի նկատմամբ կայսրության քաղաքական գերակայության կրոնազաղափարաբանական հիմքերը: Հեթանոս կայսրը չէր կարող քրիստոնյա արքայի կողմից ժանաշվել որպես իրեն արքայական արժանավորություն ու բարեմասնություններ շնորհող կողմ:

Երջանցելով Հռոմեական կայսրին նման դերում, մերժելով նրան այդ որակում հայոց արքան անմիջական հաղորդման մեջ էր մտնում միակ և ժշմարիտ համարվող աստծո հետ և վերականգնում Հայաստանում թագավորական իշխանության աստվածակարգ, աստվածատուր բնույթը: Հայոց արքան այսուհետև իշխանություն ուներ աստվածային իրավունքով: Արշակունի արքայի իշխանության աստվածատուր բնույթը մատնացույց անող ձևակերպումները առկա են ներսես Մեծի խոսքում. նա բնիկ տեր է, գորս տուեալ է ծեղ յաստուծոյ, /ՓՔ 27ԴԾԱ/: Քրիստոնեության ընդունման և կայսեր աստվածային բնույթի մերժման շնորհիվ լիովին վերականգնվեցին

հայոց արքայի որպես ինքնիշխանի/սուվերենի/իրավունքները: Աստ-վածատուր զահալալը, թագը ամենակալ աստծուց ստացած իշխանավորը, ինքնուրույնաբար, առանց կայսրության սահակցիայի փոխանցում էր զահր: Արքագործվեց հայոց զահի նկատմամբ Արշակունիների տոհմ-կան իրավունքը:

Այսպիսով, Հայաստանում նոր կրոնազաղափարաբանական համակար-գի հաստատումով վերականգնվեցին Հայկական պետության ինքնիշ-խանության, թագավորական հեղինակության սրբազան հիմքերը, իր լու-ծումը գտավ 300-ամյա քաղաքական և զաղափարաբանական ճգնաժամը:

Հաղթահարվեց Հայաստանի բնակչության մասնատվածությունը ըստ դավանական հատկանիշի՝ առանձնապես հրատապ խնդիր, քանի որ կրոնները գումարվում էին կոնկրետ սոցիալական դասերի վրա: Զրադաշտական ավազանու մկրտությամբ առաջին մեծ քայլն արվեց ինքնակամ տոհմերի և մասնայան իրանի միջև կրոնական անջրպե-տը բարձրացնելու համար, կանխվեց ավազանու այդ հատվածի էթնի-կական ինքնագիտակցության կորուստի վտանգը: Զրիստոնեության քա-ղաքական պատվիրանը՝ ծառաների՝ տերերին հնազանդ լինելու մասին, հասցեագրվեց իշխող դասակարգին՝ նախարարությանը/ՓԲ, 4, ԾԱ/:

Գլխում հատուկ ուշադրություն է դարձվում Հայաստանում թագավորական իշխանության և ձևավորվող եկեղեցու փոխհարաբերու-թյունների հարցին:

Ընդգծվում է, որ քրիստոնեության ընդունումը հետագայում հանգեցրեց արքայական իշխանության ծավալի փոփոխմանը, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների սահմանազատմանը: Ելնելով այն փա-տից, որ հին Հայաստանում թագավորը անմասնատելիորեն իրագոր-ծում էր քաղաքացիական և կրոնական/հոգևոր/ իշխանություն, հարկ է մանաչել, որ եկեղեցու կողմից հոգևոր հեղինակության ստանձ-նումը և, հետևաբար, պետական իշխանության աշխարհակազմում, նոր երևույթ էին հայկական իրականության համար: Եկեղեցու կայացումը նշանակում էր հոգևոր իշխանության ինքնավարության հաստատում, մինչդեռ արքաները նրա հետ հարաբերություններում հենվում էին քրմության հետ ունեցած հարաբերությունների իրենց փորձի վրա: Այստեղ, թերևս պարզավոր են 350-ական թթ. Արշակ երկրորդի և ներսես Մեծի բարդ փոխհարաբերությունների պատճառները: Բաժնում բացահայտ-վում են Տրդատի դիրքորոշումները Հռոմեական կայսրությունում քա-ղաքացիական պատերազմի ժամանակ/306-313/ միահեծան իշխանության տարբեր հավակնորդների նկատմամբ:

Պաշտպանվում է այն տեսակետը, որ եվսեբիոս Կեսարացու հայտնի հաղորդումը՝ Արևելքի կայսր Մաքսիմին Դալայի քրիստոնյա հայերի դեմ անհաջող պատերազմը մղվել էր հայոց թագավոր Տրդ-ատի դեմ: ¹ Այդ առթիվ առաջին անգամ նշվում է եվսեբիոսի հաղորդման այն կարևոր ցուցումը, որ Մաքսիմին Դալայի հակառա-կորդ հայերը, հուլիս, /'ΕΞ ΑΡΧΑΙΟΥ / եղել են հոմեոցիսեն-րի բարեկամներ և դաշնակիցներ: Այդ կարևոր վկայությունը կա-րող է նկատի ունենալ միայն Մեծ Հայքը, նրա թագավորին: Հիմ-նավորվում է, որ Տրդատի և Մաքսիմին Դալայի միջև պատերազմը ավելի մեծ կոնֆլիկտի՝ Հռոմեական կայսրությունում տեղի ունեցող քաղաքացիական կոիվների բաղկացուցիչ մասն էր: Մաքսիմին Դալայի դեմ պատերազմում Տրդատը հանդես եկավ որպես նրա հակառակորդ՝ Լիկինիոսի դաշնակից: Այդ դաշինքը հայոց թագավորին թույլ տվեց ամրագրել 311-312 պատերազմի արդյունքը՝ տիրույթներ հայկական տարածքների միացումը՝ Հայաստանին: Հեթանոս կայսեր դեմ պատերազ-մում քրիստոնյա հայոց արքայի հաղթանակը՝ անշուշտ հայոց ար-քայի նոր հովանավոր աստծո հզորության ապացույցն էր ծառայում:

,, Զրիստոնեության ընդունման տարեթվի հարցի շուրջ, բաժ-նում դիտարկվում են ժամանակագրական հարցերը, մասնավորապես, ընդ-գրծվում է, որ աղբյուրների ներկա դրությամբ գիտության մեջ առաջադրված տարեթվերը մնում են վարկածային, նրանց վավերակա-նությունը պնդող տեսակետները չեն հաղթահարում աղբյուրներում դրանց հակասող ցուցումները: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Տրդատի հակակայսերական քայլի ամենաբարենպաստ արտաբեր քաղա-քական պայմանները պիտի ստեղծվեին 305 թ.-ից ի վեր, Հռոմեա-կան կայսրության մեջ քաղաքացիական պատերազմի սկսման հետևան-քով: Ընդհանուր առմամբ, ընդգծվում է, որ հնարավոր են մի քանի ժամանակագրական լուծումներ/ընդ որում 298-311 թթ. հատվածի շրջա-նակում/ և հարցը պետք է քաջ համարել:

,, Եվսեբիոս Կեսարացու քաղաքական հայացքները և Հայաստանի դարձը: Զրիստոնեության քաղաքական դրույթները և թագավորական իշ-խանությունը, բաժնում քննվում է եվսեբիոսի, Եկեղեցու պատմու-թյան, մեջ՝ Մաքսիմին Դալայի պարտության մասին դրվագում նրան հաղթող Տրդատի անունը լուծության մատնելու պատճառները: Իր հաղորդ-ման մեջ՝ Եվսեբիոսը թաքցրեց յուրաքանչյուր քրիստոնյայի համար

1 Լեո, Հայոց պատմություն, հ. 1, Երևան, 1966, էջ 427:

հասկանալի այն ժշմարտությունը, որ հեթանոս բռնակալ, քրիստոնեա-
հալած քաղաքականության հետևորդ Մաքսիմին Դայային քրիստոնյա
, այրերը, կարող էին դիմազրավել և հաղթել միայն քրիստոնյա
Աստծո գործությամբ: Հեթանոս կայսեր քրիստոնեաներից պարտվելու
փաստը կարող էր միայն անհերքելի, վկայություն, ծառայեր, որ
նրանց առաջնորդը՝ հայոց արքան Ռովանավորվեց քրիստոնյա աստծո
կողմից, որը նրան պաշտպան կանգնեց: Այդ, ժշմարտությունը, սա-
կայն հակասության մեջ էր գտնվում Կոնստանտինոս կայսեր/306-
337/ նախախնամական դերի մասին Եվսեբիոսի տեսության հետ, որի
համաձայն աստվածը այդ կայսրին ընտրեց համաշխարհային քրիս-
տոնյա տերության ստեղծման համար:

Գաղափարաբանական և քաղաքական առաջնադասությունների պահ-
պանման խնդիրը Եվսեբիոսին դրդեց լուծության մատնել Մաքսիմին
Դայայի հաղթողի անունը և չպատմել նրա կատարած գործերի մա-
սին:

Բաժնում դիտարկվում են քրիստոնեական քաղաքական դրույթ-
ների կարևորությունը սուլվերենության և թագավորական իշխանու-
թյան հիմնավորման խնդրում, մասնավորապես շարունակվող օտար
գերիշխանության պայմաններում: Դիտարկվում են Արշակի, Պապի, Գա-
զիկ Արծրունու և Աշոտ 1-ի Բագրատունու թագադրությունները: Իշ-
խանության աստվածատուր լինելու մասին քրիստոնեական դրույթը
բարոյական կռիվն էր հայերի համար՝ նրանց աչքում անսասան
պահելով թագավորի իշխանության հեղինակությունը որպես աստվածա-
կարգ հաստատության, անկախ կոնկրետ քաղաքական վիճակներից: Թագա-
վորական իշխանության հիմքում ընկած էր աստծո հետ արքայի
անմիջական կապի, աստծուց/Սուրբ Հոգուց/ հովանավորվելու գաղափարը:
Այդ իրողությունը վկայում է Հայաստանում արքայական իշխանու-
թյան սրբազան հիմքեր ընդունող քաղաքական ավանդույթի հարատևու-
թյան մասին:

ԵԶՐԱՓԱԿՄԱՆ մեջ ամփոփվում են ատենախոսության հիմնական
եզրակացությունները:

Արտաշեսյանների օրոք հայկական պետությունը կայանում
է որպես երկրի ամբողջ հողափոխը և մարդկային աշխատավոր ու-
սուրսները տնօրինող ինքնակալական համակարգ: Այդ համակարգի հիմ-
քում էր արքայի՝ աստվածակարգ և սրբազան տիրակալի անսահմանա-
փակ իշխանությունը: Կանոնակարգող, նորմատիվ դեր էր կատարում միա-
պետական կրոնական գաղափարաբանությունը: Գաղափարաբանության մեջ
կենտրոնական տեղ էր զբաղում արքայի կերպարը: Աստվածային սանկ-

ցիայով կառավարող աստվածահաղորդ արքան համախմբում էր իր
անձի շուրջ սոցիումը/հասարակությունը/, արքայի գործունեության
նշանակությունը զգալիորեն գերազանցում էր աշխարհիկ, սոսկ ուղ-
մական-վարչական Փոնտիկոսների շրջանակը:

Այսպես մ.թ.ա. 1-ին դարի երկրորդ կեսից արևմուտքից և
արևելքից մեծ տերությունների էքսպանսիան հանգեցրեց հայկական
պետության գոյության կրոնագաղափարաբանական հիմքերի ծանր և
երկարատև ճգնաժամի: Խախտվեց կապը պետական իշխանության և իր
սրբազան/կրոնական/աղբյուրի միջև: Այդ պայմաններում հայկական
պետությունը ի դեմս Տրդատ 3-րդի, 4-րդ դարի ամենասկզբին ի շահ
ազգային պետական, կոնսոլիդացիոն խնդիրների լուծման, քրիստոնեու-
թյունը ժանաչեց որպես Հայաստանի պետական կրոն: Իրագործվեց երկ-
րի բոլոր հասարակական դասերը ընդգրկած վճռական կրոնական հե-
ղաշրջում՝ կտրուկ անցում տարերային, բնապաշտ պոլիթեիզմից դեպի մո-
նոթեիզմ/իր թեիստական տարբերակով/, դեպի աստծո վերացական ու-
նիվերսալ գաղափարը: Առաջին անգամ արևելյան բազմաստված հասարա-
կության մեջ խոստագույնս իրագործվեց մի թագավոր՝ մի աստված քա-
ղաքական սկզբունքը: Վերականգնվեց հայոց արքայի աստվածակարգ
վիճակը: Այդ իրադարձության նշանակությունը դուրս է գալիս
միայն 4-րդ դարի կոնկրետ պատմական խնդիրների շրջանակից, ու-
նենալով հսկայական քաղաքակրթական նշանակություն հայ ժողովրդի
և Մերձավոր արևելքի հոգևոր և մշակութային հետագա զարգացման
համար:

Ատենախոսության թեմայով հայցորդի կողմից հրատարակված են՝
Մենագրություններ

1. Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ,
Երևան, 1987, , Հայաստան, , հրատարակչություն, 240 էջ, էջեր 87-90,
99-102:
2. Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ. Արտաքին քաղաքակա-
նություն, պետական գաղափարաբանություն, քրիստոնեության ընդու-
նում: Երևան, 1997, , Արեգ, , հրատարակչություն, 216 էջ:

Հոդվածներ

1. К вопросу о вероисповедании населения городов Армении (I В.
до н.э. - IV В. н.э.). Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1989,
թիվ 2, էջ 198-204

2. Международные отношения на Переднем Востоке в 80-70-х годах до н.э. (Тигран II и войска с берегов Аракса). — Вестник древней истории. Москва. "Наука". 1992, № I, с.152-160.
3. L'Arménie et le Proche-Orient hellénistiques au temps de Tigrane le Grand. — Arménie entre Orient et Occident. Trois mille ans de civilisation. Bibliothèque nationale de France. Paris 1996, p.32-37.

Рубен Левонсвич Манасерян

ПРОБЛЕМЫ ПОЛИТИЧЕСКОГО И ИДЕОЛОГИЧЕСКОГО РАЗВИТИЯ
ДРЕВНЕЙ АРМЕНИИ. ЦАРСКАЯ ВЛАСТЬ, МЕЖДУНАРОДНЫЕ
ОТНОШЕНИЯ, ГОСУДАРСТВЕННАЯ ИДЕОЛОГИЯ (I в. до н.э. —
— IV в. н.э.)

В диссертации, представленной на соискание ученой степени доктора исторических наук, рассматриваются особенности внутривнутриполитического и идеологического развития Армянского царства в условиях экспансии Римской империи и Ирана, международно-правовые аспекты отношений Армении с великими державами. В контексте указанных вопросов освещаются конкретные причины принятия христианства в Армении, показывается политическое значение этого события.

На основе выводов, сделанных в диссертации, можно указать на основные особенности государственного, идеологического развития Армении, ее международного положения в данный период.

1) При Тигране Великом были достигнуты максимальная централизация управления и концентрация в руках царской власти всего земельного фонда и людских ресурсов страны. В лице царского двора и военно-административного аппарата сложилась государственно-владельческая система, существовавшая за счет эксплуатации (налогообложения) общинного крестьянства.

2) В период римско-парфянских войн за господство на Востоке (54-36 гг.) Армения занимала позицию третьей силы, которая избегая непосредственного вовлечения в военные действия, по собственному усмотрению определяла их исход, имея своей целью взаимное ослабление обеих сторон конфликта — Рима и Парфии, ликвидацию для Армянского государства ситуации нахождения в римско-парфянском окружении.

3) При Октавиане-Августе римская экспансия в отношении Армении причела к установлению над ней в 20 г. до н.э. верховенства Рима, что выразилось в практике коронации армянского царя римским импе-

ратором или его представителем. Согласно свидетельствам нарративных и нумизматических источников, император, вручая знаки власти царю, претендовал на роль бога в соответствии с древнеармянскими представлениями о богоустановленности царской власти. Отношения зависимости, которые утверждались Римской империей, как показывают данные римских источников (В.Патеркул, Тацит, Светоний, Флор, Анкирский мемуарист) имели государственно-правовое оформление, официально интерпретировались как установление "власти" римского народа над Арменией, подчинение ее действию римского права. Возвешение императором царя на престол Армении означало подрыв религиозно-идеологических основ царской власти, сакральных устоев авторитета царя. Имело место нарушение непосредственной связи царя с миром богов, которая сообщала сакральный характер его общественным функциям, важнейшая из которых — обустройство страны (что символизировалось созданием парадизов), регулирование отношений между сельскими общинами и т.д.

Борьба Армении за независимость в I-II вв. выражалась в упорном отрицании небогоустановленных царей, получавших знаки власти от императора.

4) В 298 г., после ликвидации в Армении господства Сасанидской державы, царь Тиридат в целях обретения идеологической и политической независимости от Римской империи и восстановления авторитета царской власти в стране (непременных условий сплочения вокруг трона в большинстве своем просасанидской знати и создания централизованного государства), нашел опору в религии, которая отрицала личную божественность Римского императора. Благодаря принятию христианства были отвергнуты те самые идеологические основы, которые превращали императора в высшую священную инстанцию, возводившую в царское достоинство и давали ему основание претендовать на верховенство над Арменией. Провозгласив веру в христианского бога государственной религией, Тиридат восстановил свой статус богоданного властителя. В полном объеме были восстановлены права царя как суверена: отныне он самостоятельно, без санкции извне передавал власть по наследству.

Принятие христианства в Армении служило утверждению ее государственной независимости, идеологической и политической консолидации.

Рубен Левонсвич Манасерян